անձնավորությունները հիմնականում հոգևոր դասի ներկայացուցիչներ են:

Այդուհանդերձ, «Գիրք պատմութեանց»-ում առաջին հերթին հառնում է իր՝ ***պատմիչի կերպարը***, որն անխուսափելիորեն ձևավորվում է այն բանի շնորհիվ, որ հայ պատմիչն ընդհանրապես կայական ու չեզոք վիճակում չէ իրադարձությունները վկայագրելիս, և իր անհատականությունն ու հուզաշխարհն անպայման ընդգծում է: Կերպարի ձևավորմանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ պատմիչը հեռակա զրույցի է բռնվում իր հավանական ընթերցողի հետ: Լենա Խանլարյանն այս առումով գրում է. «Սույն կերպարի մեջ (Դավրիժեցի-պատմիչի–Ա.Ն.) անքակտելիորեն միավորվում են ավանդական հայ պատմիչ-տարեգիրը, որը, նստած վանքի ներսում, նկարագրում է երկրի վրա տեղացած ցավալի իրադարձությունները և պատմիչ-հետազոտողը, որն անդուլ կերպով նյութ է որոնում, ձգտում է ճշմարտությանը, ջանում գտնել փաստերի իսկությունը իր հետաքրքրությունների առարկան դարձած պատմական դեմքերի գնահատման մեջ, և որը շատ երկրներ է շրջագայել՝ ստուգելու այդ փաստերը: ...Առաքել Դավրիժեցու միայն արտաքին կերպարը չէ, սակայն, որ մենք տեսնում ենք նրա երկում: Պատմիչի առանձին արտահայտություններից, ստեղծագործության ամբողջ ոգուց և նրանից, թե նա ինչպես է լուսաբանում այս կամ այն փաստն ու երևույթը, կարելի է դատել պատմիչի անձնավորության մասին, նրա պատմական ու հասարակական-քաղաքական հայացքների, մտահորիզոնի ու աշխարհայացքի մասին»[9]:

Կերպարային ընդգրկումներում նախևառաջ ընդգծվում է պատմիչի հայրենասիրությունը: Դավրիժեցին ուրախանում-հրճվում է հայրենի երկրի յուրաքանչյուր հաջողությամբ ու ժողովրդի բարօրությամբ, և իր ցավն ու վիշտն ընթերցողին իրապես

---

[9] ***Առաքել Դաւրիժեցի***, Գիրք պատմութեանց, տե՛ս «Առաջաբանը», էջ 30–31: